Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 24

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<02>> հոկտեմբերի 2019թ. ք. Երևան

2019 թվականի հոկտեմբերի 2-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Սահակյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի տեղակալ, պատասխանատու քարտուղար,
Ա. Մուսոյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության երկաթուղու պետ, հանձնաժողովի անդամ,

Նիստից հարգելի պատճառով բացակայում են Կ. Գասպարյանը, Ն. Թևոսյանը և Հ. Բատիկյանը:
Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Արմեն Արսենի Մոսինյանի 24.09.2019 թ. հայտը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց Արմեն Արսենի Մոսինյանի 24.09.2019 թ. հայտը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին, որից հետո

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրեց՝

ԱՐՄԵՆ ԱՐՍԵՆԻ ՄՈՍԻՆՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Հանգեցին եզրակացության՝ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների պահանջներին՝ ենթակա են լիցենզավորման:

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
պատասխանատու քարտուղար Ա. Ստեփանյան